Փոխըմբռնման հուշագիր

Հայաստանի Հանրապետության 7-րդ գումարման Ազգային ժողովի և կանանց հիմնախնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների միջև

Մարտի 8, 2019 թ.

Սույն փոխըմբռնման հուշագիրը ստորագրվում է Հայաստանի Հանրապետության 7-րդ գումարման Ազգային ժողովի և Հայաստանի քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների՝ ի դեմս կանանց հիմնախնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպությունների (այսուհետ՝ «Կողմերի») միջև:

Փոխըմբռնման հուշագրի նպատակն է՝

ստեղծել համագործակցության հարթակ ՀՀ օրենսդիր իշխանության և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների միջև՝ նպատակ ունենալով համատեղել ջանքերը կանանց և տղամարդկանց իրավունքների և հնարավորությունների իրական հավասարությունն ապահովելու ուղղությամբ:

Հիմք ընդունելով,

որ կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հնարավորությունների ապահովումը ամրապնդված է ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ գենդերային քաղաքականության հայեցակարգով և դրա շրջանակներում ընդունված օրենքներով ու ծրագրերով, ինչպես նաև այդ ուղղությամբ Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորություններով,

Առաջնորդվելով,

այն գիտակցմամբ, որ խորհրդարանական կառավարման պայմաններում ՀՀ Ազգային ժողովում ներկայացված քաղաքական ուժերն են մասնակցում օրենսդրական դաշտի բարելավմանն ու գործադիր իշխանության կողմից իրականացվող քաղաքականության մշակմանը,

Հայաստանի Հանրապետության 7-րդ գումարման Ազգային ժողովը և մի շարք հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ հաստատում են սույն Փոխըմբռնման Հուշագիրը՝ պայմանավորվելով համագործակցություն ծավալել երկրի զարգացման գործընթացներում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքներն ու հնարավորություններն ապահովող հետևյալ դիրքորոշումների շրջանակում.

1. Կողմերը պատրաստակամ են իրենց իրավասության շրջանակներում ապահովել քաղաքացիական հասարակության մասնակցությունը օրենսդրական նախաձեռնություններում՝ ուղղված քաղաքական, տնտեսական և սոցիալական ոլորտներում կանանց իրավազորմանը, ինչպես նաև կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների խթանմանը:

2. Կողմերը համաձայն են սահմանված պարբերականությամբ իրականացնել համատեղ հանրային միջոցառումներ՝ խթանելու երկրի զարգացման գործընթացներում կանանց և տղամարդկանց հավասար մասնակցությունը:

3. Կողմերը պատրաստ են խորհրդակցել «Կանանց օրակարգ՝ հանուն զարգացման» փաստաթղթում զետեղված և ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող այլ հիմնախնդիրների շուրջ, ինչպես նաև քննարկել միասնաբար իրականացվող գործողությունների կատարման ընթացքը՝ պլանավորելով համատեղ հետագա գործողությունները:

Սույն Հուշագրով սահմանված գործառույթները համակարգվում են հարթակի խորհրդի կողմից, որը ներառում է քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ և Ազգային Ժողովի պատգամավորներ:

Սույն Հուշագիրը չի սահմանափակում Կողմերի միջև առկա համագործակցությունը խթանող այլ գործառույթների իրականացման հնարավորությունը:

Սույն Հուշագիրը չպետք է մեկնաբանվի որպես որևէ իրավական պարտականություն ստեղծող փաստաթուղթ:

Հուշագիրը ստորագրում են Կողմերի ներկայացուցիչները՝ ի դեմս.

Հայաստանի Հանրապետության 7-րդ գումարման Ազգային ժողովի նախագահի տեղակալ՝

Լենա Նազարյան

Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ՝

«ՕքսԵՋեն» երիտասարդության և կանանց իրավունքների պաշտպանության հիմնադրամ _____

«Ազաթ» հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների պաշտպանության կենտրոն ՀԿ _____

Մարտունու կանանց համայնքային կենտրոն ՀԿ _____

«Աջակցություն կանանց և երեխաներին» ՀԿ _____

«Արմավիրի զարգացման կենտրոն» սոցիալ-տնտեսական ՀԿ _____

«Գյումրու երիտասարդ կանանց քրիստոնեական ասոցիացիա «Ֆլորա» ՀԿ _____

«Դեմոկրատիան այսօր» ՀԿ _____

ԵՊՀ գենդերային հետազոտությունների և առաջնորդության կենտրոն _____

Եվրասիա համագործակցություն հիմնադրամ _____

«Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիա» ՀԿ _____

«Իրավունքի ուժ» իրավապաշտպան ՀԿ _____

«Խտրականության դեմ պայքարի և հանուն հավասարության կոալիցիա» ՀԿ _____

«Կանանց իրավունքների տուն» ՀԿ _____

«Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ _____

«Կանանց իրավունքների կենտրոն» ՀԿ _____

«Կանանց ռեսուրսային կենտրոն» ՀԿ _____

«Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիա» ՀԿ _____

«Հանուն հավասար իրավունքների» կրթական կենտրոն ՀԿ _____

«Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ _____

Միություն երիտասարդական կազմակերպությունների _____

«Պրոգրես» ՀԿ _____

«ՊրոՄեդիա-Գենդեր» ՀԿ _____

«Վիններթ Հայաստան» կանանց ռեսուրս կենտրոնների ցանց _____